ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

18.10.2024թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ դիմած անձանց հաշմանդամության սահմանման և ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի N 72-Ն հրամանով հաստատված անձի ֆունկցիոնալության գնահատման ուղեգրումների գործընթացում առկա խնդիրների մասին:
/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/
2. Տեղեկատվության հաղորդում «Լուսաստղ» բարեգործական հասարակական կազմակերպության ծրագրերի վերաբերյալ:
ա/ «Ներառում հավասարության սկզբունքով» ծրագրի արդյունքների ամփոփում և խնդիրների վերհանում: «Քաղաքականության փաստաթուղթ. հավասար հնարավորություններ և մատչելի պայմաններ». առցանց քարտեզի ներկայացում:
բ/ «Լուսաստղ» ԲՀԿ-ի կողմից 2024թ. մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով տուժած ընտանիքների կարիքների գնահատման արդյունքների ներկայացում:
/Զեկ.՝ Հանձնաժողովի անդամ, «Լուսաստղ» ԲՀԿ նախագահ Անի Գաբրիելյան/
3. Տեղեկատվության հաղորդում «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի կատարած աշխատանքների և ծրագրերի մասին
ա/ «Քո ապագան քո ձեռքում է. Կարիերայի պլանավորում»
/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ Ծրագրի ղեկավար Օֆելյա Վիրաբյան/
բ/ «Տեղեկատվական տեխնոլոգիաների կարողությունների զարգացումը երիտասարդների շրջանում»
/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ Ծրագրի ղեկավար Հասմիկ Մխիթարյան/
4. Տեղեկատվության հաղորդում «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման ՀԿ-ի աշխատանքների վերաբերյալ:
ա/ Սոցիալ հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում իրականացվող ծրագրերի մասին
բ/ Ներառական ամառային ճամբարի մասին:
/Զեկ.՝ «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման ՀԿ-ի Ստեփանավանի մասնաճյուղի ղեկավար Գոհար Գևորգյան/
5. Տեղեկատվության հաղորդում «Մանկական կենտրոն» ԲՀԿ-ի առողջապահական ծրագրի վերաբերյալ:
/Զեկ.՝ «Մանկական կենտրոն» ԲՀԿ-ի նախագահ Թամարա Գրիգորյան/

6. «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի տրամադրում» ծրագրի ներկայացում:

/Զեկ.՝ ծրագրի Վանաձորի համակարգող Հասմիկ Հովսեփյան,
Ծրագրի ղեկավար Հերմինե Գասպարյան/

7. Հայտարարություններ.

ա/ Ներառական կրթության մակարդակը Վանաձորի դպրոցներում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի անդամ, «Լուսաստղ» ԲՀԿ նախագահ Անի Գաբրիելյան/

8. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Նախապատրաստել համայնքների ղեկավարներին ուղղված գրություն՝ փողոցների շինարարական աշխատանքների ժամանակ նկատի առնել տեսողական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժի հետ կապված տակտի սալիկներ տեղադրելու հարցը:

բ/ Հանձնաժողովի նիստի նյութերը նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կայք-էջում տեղադրելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի անդամ Աննա Գասպարյանին՝ ապահովել Հանձնաժողովի նիստի հրապարակայնությունը:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԳՈՌ ԱՍՐՅԱՆ